Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարարի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2022 թ. նոյեմբերի 7-9-ը, Բիշքեկ (Ղրղզստան)

4. Հրավիրող կողմը

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Միջոցառման հիմնական նպատակն էր մասնակիցներին ծանոթացնել նիկոտին պարունակող արտադրանքի կարգավորման առկա հնարավորություններին, քննարկել ԵԱՏՄ անդամ-երկրների նորմատիվ իրավական մոտեցումները, որոնք օգտագործվում են այդ ապրանքների նկատմամբ, ինչպես նաև նիկոտին պարունակող ապրանքների համար ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի ամրապնդման ուղիները՝ հաշվի առնելով առկա ապացույցներն ու առաջարկությունները:

6. Քննարկված թեմաները

Միջոցառման շրջանակներում քննարկվեցին էլեկտրոնային ծխախոտների շրջանառության կարգավորման մոտեցումները, ինչպես նաև տաքացվող ծխախոտի արտադրանքներին և ավելի նոր արտադրատեսակներին առնչվող հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումները կայացել են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Այցի շրջանակում հանդիպումներ են տեղի ունեցել միջոցառման մասնակից երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա երկկողմ և բազմակողմ համագործակցության ուղղությունները: Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը գործընկեր փոխնախարարների հետ մասնակցել է տեղի լրատվամիջոցների համար նախատեսված մամուլի ասուլիսին, որի շրջանակներում յուրաքանչյուրը ներկայացրել է իր երկրում տվյալ արտադրատեսակների վերաբերյալ առկա կարգավորումներն ու նոր ծխախոտային արտադրատեսակների, էլեկտրոնային ծխախոտների կարգավորման հարցերը: Կողմերը ԵԱՏՄ շրջանակներում միասնական կարգավորումներ ունենալու ուղղությամբ աշխատելու պատրաստակամություն են հայտնել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառման մասնակիցները ջանքեր կներդնեն համաժողովի ընթացքում ձեռք բերած գիտելիքները Հայաստանում կիրառելու: Հանդիպումների ընթացքում առաջարկվել է ամրապնդել մասնագետների փոխգործակցությունն ու կապերը:

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2022 թ. նոյեմբերի 10